

ՄՇԱԿ



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյալս խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ընդ-
հանուր գիտութեանը, որ ներկայ 1890 թվի նոյեմբերի 11-ին, կիրակի օր, Թիֆլիսի
ժողովարանի զաջլիճում, առաւօտեան 9 ժամին, կայանալու են երկրորդ կարգի ձայնա-
ւորների ընտրութիւնները, առաջիկայ 1891—1894 քառամեակի համար: 3—3

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Հին-Նախիջևա-
նից. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից:
Արտաքին լուրեր. — Հեռագրեր. — ՏԵԼԵԳՐԱ-
ՑՈՅՑ. — ՏՍԱՐԱՐԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ. — ՖԵԼԻԵՏՈՆ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ

Հոկտեմբերի 30-ին
թէն մի փոքր ուշ, բայց աւելորդ չենք համարում
նկարագրել ու. թաչ վանքի ուխտը, որ ունի շատ
հետաքրքրական կողմեր և արժանի է ընթերցող-
ների ուշադրութեան: Ս. թաչի վանքը գտնվում է
Պարսկաստանում (Վայոց ձորում), ժամաչափ հե-
ռաւորութեան վրա հայաբնակ Մալիշկա գիւղից:
Որպէս պատմում են, նա ունեցել է անցեալում
մեծ նշանակութիւն. 25 տարի չը կայ, ինչ որ
նորոգվել է, որովհետև կիսակեր գրութեան մէջ
էր մեր ուրիշ շատ վանքերի պէս:
Վանքը համեմատաբար հարթ տեղի վրա է
չինկած և ամբողջապէս սրբատաշ մոխրագոյն
քարից է. նրա դռնի կողմը աւելի վայե-
լու է, քան ներսի, չունի ոչինչ քանդակներ և
արձանադրութիւններ: Մի բան որ ունի վանքը,
ու. թաչի գերեզմանն է, որ աշակողմեան խորա-
նունք է: Ահա այս գերեզմանաբարն է, որ գրա-

ւում է բազմաթիւ ուխտաւորներ, սակայն ով է
թողած նրա տակ,—այդ իրան ժողովրդին էլ
յայտնի չէ: Այնու ամենայնիւ, նախապաշարված
և տգէտ ամբողջ աշխարհում նա մեծ գործիւն ու-
նի. ամբողջ հաւատում է բոլոր սրտով նրա չա-
րած հրաշագործութիւններին. նա գիտում է այդ
անյայտ սրբին ամեն տեսակ ձախողակի հանգա-
մանքներում, վերջապէս նա երբևէ ու է ու. թաչ
վանքի անուանով:

Ինչ ասել կուզէ, որ վանքը չըջապատված է
բարձր լեռներով, քանի որ Գարաշահազը լեռ-
նային երկիր է: Վանքից մի վերստ հեռաւորու-
թեան վրա գտնվում է թուրքաբնակ անշահ մի
գիւղ, որտեղից ուխտաւորները գնում են ջուր
բերելու, որովհետև վանքը մի անջրդի տեղում է
կանգնած: Սա ունի սենեակներ էլ. երեք կողմից
և եթ, սենեակները շատ վատ են, մութ ու հա-
սարակ քարերից շինած, որոնք մի տեսակ ցած
պարիսպ են կազմում: Մի խօսքով վանքն ուխ-
տաւորների համար չունի բնաւ յարմարութիւն:
Ներս: Վայոց ձորի վանքերից ու. թաչում միայն
կայ միաբան, վանահայր, որը մի ծերունի վա-
րդապետ է: Չը գիտենք ճիշդ, որպէս է կառավար-
վում վանքը, բայց յայտնի է, որ գրեթէ ամբողջ
արդիւնքը ուղարկվում է էջմիածնի գանձարանը:
Իսկ արդիւնքը բաղկանում է հետեւեալ աղբիւրնե-
րից. վանքն ունի խանութներ, պարսկի տակ
կանգնած, իւրաքանչիւրի համար 2—3 օրվայ մէջ
առնում է վարձ 4—5 ռուբլի. մի քանի հայեր և
չափերը թ ու ռ. ք եր ի ց նոյնպէս իրանց սեփական

ՖԵԼԻԵՏՈՆ

Երկրաշարժ.—Հայոց Էֆեմբրդին.—Քուժայիսի
բանկի և Թիֆլիսի Գումայի ընտրութիւնները.—
Մի կուսակցութիւնները.—Նորընտիր վրացի
ձայնաւորներ.—Հեթանոսների դարը.—Խաւար
ամբողջ.—Մեր քաղաքային Գուման ինչ պէտք է
անէ.—Գուցէ ամբողջ կը մերժէ էլ ինտելիգեն-
ցիայի օգնութիւնը.—Մի պարսկական առակ.—
Որպի կատարեցա՞րդ իմում է քաղաքակիրթ մարդ-
կութիւնը.—Աֆէրիստութիւն և պոստային շուր
կանոն.—Մարտիանովի գիւղը.—Թող մեր հրատա-
րակիչները օրինակ առնեն.—Հասել է նրանց հա-
մար ոսկէ դարը.

Հոկտեմբերի 28-ի գիշերը երկրաշարժ կար թէ
Թիֆլիսում և թէ երկրիս ուրիշ տեղերում...
Մեր հայոց էֆեմբրդին այդ երկրաշարժի
առիթով ալ և ալ գուշակութիւններ է անում,
որինակ թէ՛ «խառնութիւններ կը լինեն», «պա-
տերազմներ կը լինեն» և այլն...
Այդ գուշակութիւնները մասամբ իրագործված
են արդէն. Գումայիսի կառավարական բանիկ
ընտրութիւնների ժամանակ եղաւ բաւական կա-
ռայի պատերազմ, որը քաղաքային Գումայի ընտրու-
թեանը, թէ՛ և առ այժմ առանց պատերազմի են
անցնում, բայց քաղաքիս բոլոր ընտրողները երեք
դասակարգ բանակների բաժանվեցան և կազմ ու
պարտաստ են իրար դէմ անեղ պատերազմ մղե-
լու:

Կուսակցութիւններից առաջինը անուանվում է
«Սոցիալիստ կուսակցութիւն», որը պատրաստվում է
պղտոր ջրում ձուլի որպաշու:

Երկրորդն անուանվում է «Վարաքաղցիների
կուսակցութիւն», որը չը կարողանալով իր հա-
մար զորքի հրամանատար նշանակել Նապօլէօն
առաջինին, իր հրամանատարն է ընտրել Նապո-
լէօն Բոնապարտին...

Երրորդ կուսակցութիւնը կրում է «Վրաց-
հայոց կուսակցութիւն» անունը, որը նպատակ

ունի սահմանիւն հայոց տարրը քիչ թէ շատ
բարեկամանել տաքարիւն վրաց տարրով... Միայն
ցանկալի է, որ Գումայի ձայնաւորների կազմա-
կերպութեան մէջ մտած մեր վրացի-եղբայրները
չը մոցեն ինչ մեղ մօտ էլ Գումայիսի բանիկ ընտ-
րութիւններում ընդունված տարազանները...

Գումէ մինչև այժմ ընտրված ձայնաւորների ա-
ռաջին կարգի եօթ հոգի վրացիք. բաւական խա-
ղաղասէր մարդիկ են երևում, բայց ինչ, բայց
պ. Գարեթվելովից, եւրօպական զգեստներ հագած
ուսնեն և նրանցից ոչ միքն իրանց գօտիի վրա
խանչալներ չեն կրում...

Բայց նորընտիր վրացիներից ամենախաղաղա-
սէրն է, ի հարկէ, վարժապետ Յիւլիտաճէ, որը
իր ներկայութեամբ, անտարակոյս մեծ օգուտ կը
բերէ Գումային... Նիստերի ընդմիջումներում,
որպէս զի ձայնաւորները չը ձանձրանան, քիչ էլ
քաղաքակիրթվին, վարժապետ Յիւլիտաճէ ձա-
յնաւորներին դասախօսութիւններ կը կարդա՝
պատմութիւններից, աշխարհագրութիւններից, ուստաց
քերականութիւններից և մանաւանդ կը սովորեցնէ
նրանց ռուսերէն լեզուի բառերը ճշգրտութեամբ
արտասանել:

Հայոց Էֆեմբրդին մի գուշակութիւնը միայն
ղեւ ևս չէ իրագործվել, բայց յոյս ունենք, որ նա
էլ կը կատարվի, այն է որ «հեթանոսները կը
փախչեն ուրիշ երկրները, և նրանց տեղը ուրիշ-
ները կը գրաւեն...»

Ո՞վքեր են այդ հեթանոսները... Ի՞նչ կարծիքով
որովհետև հեթանոսները միշտ ալ և ալ թան-
գազին իւր զէնն են են պաշտում, մեր հեթա-
նոսները ասելով՝ պէտք է հասկանանք մեր
«փողապաշտներ»: Այժման դարը նրանց է պատ-
կանում...

Եւ իրաւ, շատ խիստ կերպով է դարձացել
մեզանում փողապաշտութիւնը... Մէկը իր բոլոր
ջանքերն է գործ դնում հասարակական այս կամ
այն պաշտօն ձեռք բերելու և ուրիշին վայր գցե-
լու, միւսը ամեն աշխատանք է գործ դնում ա-

խանութներն ունեն, որոնցից կէս քէէնը արվում
է վանքին: Վանքն ունի բաւական անասուններ,
ապրանքներ և հողեր. բացի այդ բոլորից, իւրա-
քանչիւր տարի մօտակայ գիւղերից վանքի օգտին
հաւաքվում է 1000 ռուբլու չափ ցորեն և գարի:
Այլ ևս ուխտաւորների թէ դրամական և թէ իրե-
զէններով նպատակներ կրկնապատկում են վան-
քական արդիւնքը, ուրիշն վանքն իր առատ ե-
կամտների շնորհով հարուստ կարելի է համա-
րել:

Ս. թաչի ուխտն առաջ կատարվում էր ու. թա-
չի վերացման տօնին, իսկ այժմ լինում է աւելի
ուշ՝ հոկտեմբեր ամսին, այդ այն պատճառով, որ
գիւղացիները վերջացրած են լինում իրանց երկ-
րագործական աշխատանքները և աղատ են լի-
նում գրեթէ բոլոր հոգեւորից: Մենք տակաւին
տեսած չէինք մեր գաւառում այսպիսի մի ուխ-
տակար, այսպիսի բազմաթիւ ուխտաւորներով, ո-
րոնց թիւը, անկասկած, 15 հազարի է հասնում:
Այստեղ մենք տեսնում ենք, հարկաւ, ամբողջ
Գարաշահազի, Հին-Նախիջևանի, Վարաքաղի և
Նոր-Բայազետի գաւառներից, մինչև անգամ և
Երևանից եկած այցելուներ, ամեն հասակի և սե-
ռի հայեր: Սակայն միթէ միայն հայեր են լինում,
ոչ, շատ թուրքեր և քիւրդեր էլ են գալիս թէ
իրանց բերքերը վաճառելու և թէ անհրաժեշտ
ապրանքներ գնելու: Չանապան լեզուներ, բազմա-
թիւ բարբառներ այստեղ առիթ էք ունենում
լսելու. ձեզ դարձանում է զգեստներ, տարազ-
ներ խալտաճաճութիւններ, ջուլ-ջուլ գաւառների
մարդկանց և կանանց տիպերի տարօրինակութիւ-
նը:

Վանքի սենեակները, բնականաբար, շատ օա-
կաւ մարդիկ են տեղաւորում իրանց մէջ, այս
պատճառով ուխտաւորները զարկում են վրան-
ներ. վրան կայ որ արժէ 5 ռուբլի անգամ, շատը

առաջինն մեծանելու, երրորդը միջին կէս է լինում
իր կողմը մեկնեաներին դրաւելու, չորրորդը
պահանջում է հասարակութիւնից ցը մահ թո-
շակ իր օգտին նշանակելու, և այլն և այլն...
Մէջտեղ ճիւղտվում է տգէտ, խաւար ամբո-
լը, որի մասին ոչ ոք չէ մտածում, որի կրթու-
թեան և բարոյականութեան վրա ոչ ոք չէ հո-
գում:

Կարծում եմ որ մեր քաղաքային Գուման, փո-
խանակ իր ծառայողներին, որոնք այնպէս էլ
իրանց ծառայութեան ընթացքում առատ առատ
ռոճիկներ են ստացել, խոշոր միանուագ դումար-
ներ պարգեւելու, կամ ցը մահ թոշակ նշանակե-
լու, աւելի լաւ կանէր խեղճ, ողորմելի, անասա-
կութեան, քեֆի, հարեցողութեան և տղիտու-
թեան մէջ փող ժողովրդի ստորին դասակարգի
բարոյականութեան վրա մտածելու, նրա կրթու-
թեան մասին հոգալու, վերջ դնելով քաղաքում
եղած այն բաղմամբիւ զինեաներին, որոնք մեա-
նում են ժողովրդի բարոյականութեանը, բայց
քաղաքային արկղին մեծ չափ են բերում, մտա-
ծէր էժան ճաշաբաններ ժողովրդի համար հիմնե-
լու, հոգ տանէր ժողովրդի ստորին դասակարգի
համար հրապարակական դասախօսութիւններ և
կիրակեայ դպրոցներ հաստատելու...

Սակայն ով գիտէ, գուցէ խաւար ժողովուր-
դը տեսնելով իրանից ոչ պակաս ապականված
ինտելիգենցիայի կեղծաւոր հոգատարութիւնը,
կտրական կերպով կը մերժէ ընդունել այդ տե-
սակ բարեբարութիւնը...

Գուցէ ու կապէր. լքող ևս յիմար մնամ,
տղէն ու խաւար մնամ, անբարոյական մնամ,
խեղճ մնամ,—միայն թէ քեզ պէտքերի ձեռքից
ոչինչ բարեբարութիւն, ոչինչ արդար դա-
տաստան չընդունեմ...

Այդ ինչ յիշեցնում է մի պարսկական առակ,
մի յիմար և անշուրճ դատաւորի մասին, որի ան-
ձուրնի վճիռները տեսնելով, մեծաւաճը պատ-

2, 3, 4 ռուբլանց վրաններ են: Վրանատէրերը
սովորաբար լինում են մօտ գիւղերի հայերը և
թուրքերը: Կարծեմ, առանց չափազանցութեան
կարելի է ասել, որ 3 հարկը վրան կար. վրան
վարձում են ունեւորները, բայց չքաւորները բաց-
օղեայ են իջնում որ և է տեղ. 3 վրան չըջանաճե-
տարածութեան վրա իջել են ուխտաւորներ: Ուխ-
տի ժամանակ եղանակը գեղեցիկ էր, իսկ ե-
թէ անձրև է լինում, ուխտաւորների վրան-
ները և իրերը լաւ թրջվում են (այդ յաճախ է պա-
տահում): Եւ ասեցի քաղաչէն խանութներ իմա-
սին, բայց չստացի, որ կան վրանաւոր խանութ-
ներ, նոյն իսկ առեւտուրը կատարվում է և բաց-
օղեայ: Ինչ որ մենք գտնում ենք որ և է գաւառա-
կան քաղաքում, այստեղ կայ, ինչ որ արտադրում
են մեր երկրի գիւղերն ու քաղաքները, կամ
Ռուսաստանի և Պարսկաստանի ապրանքներ բա-
ւականաչափ կան: Ինչ որ պէտք էր ուխտաւորների
համար, թէ ուխտի ժամանակ և թէ տան մէջ,
բերված էր ու. թաչ: Ի հարկէ, աւելի էժան գնով
են ծախվում ամեն տեսակ իրեր, ապրանքներ,
որովհետև 2—3 օր է տևում այդ տօնավաճառը:
Եւ անուանեցի տօնավաճառ, որովհետև այսպիսի
ժամանակաւոր առեւտուրը կատարեալ տօնավա-
ճառ է: Որպէս են ծագել, օրինակ, Ռուսաստանի
բոլոր տօնավաճառները, եթէ ոչ վանքերի մօտ:
Կիանք ու. թաչում եւսում էր թէ ցերեկ և թէ
գիշեր. ամեն ինչ և ամեն ոք ուրախ էր, ահա
ձեր առջևից անցնում են մի խումբ հարսներ,
կամ «աղապ» ու նշանած աղջիկներ, ուրախ ջըր-
քիշ արձակելով. սրանք ամենքը եկել են ուխտ,
որպէս հարսանիք, հազած ամենալաւ և մաքուր
չորեր. սրանցից մի քանիսը պարսկացիներ կա-
խած ունեն հին աբասիններ, կամ պատմական ժա-
մանակների դրամներ: Հարսները երեսները
ծածկած են թողով (ուրիանգով), հասակ առած

րատտ է լինում ուրանալ իր կրած մեծաւոր, յետ
կանգնել իր պահանջած բաւարարութիւնից, միայն
թէ աղատով տգէտ դատաւորից:

Ահա առակը.

Մի մարդ մի բռնված էլ է քշում մեծ ճանա-
պարհի վրա (երեւի պարսիկների մօտ էլ առանց
էշի ոչինչ չէ լինում): Յեղա ճանապարհում այն-
պէս մեծ է լինում, որ խեղճ էլը խրվում է ցեխի
մէջ ու նրան ցեխից հանելը հնար չէ լինում:
Այդ ժամանակ ճանապարհով անցնելու է լինում
մի այլ մարդ էլ: Եւ տեղը կանչում է նրան և խեղ-
րում օգնել իրան՝ էշին ցեխից դուրս հանելու...
—Եւ էշին ականջներից կը քաշեմ, իսկ դու
պոչից քաշի, դուցէ այդպիսով ցեխից դուրս կը
բերենք կենդանուն:

Եւ իրաւ, սկսում են քաշել էշին, բայց յան-
կարճ էլը պոչը պոկվում է և մնում է անցողի
ձեռքում...

Էշի տեղը վրդովված յարձակվում է մարդու
վրա, որպէս զի նրան ծեծէ, բայց սա փախչում
է, իսկ էշի տեղը իր էշին ու էշի վրա բարձած
բեռը թողած՝ վազում է նրա ետևից:

Փախչողը ուղեւաղով իր հալածողից մի տեղ
ապաստանելով, մի գիւղական տուն է ներս պրծ-
նում... Այդտեղ պառկած է լինում մի յղի կին,
որը աչից վրժում է երեխային: Կնոջ մարդը յար-
ձակվում է մարդու վրա և ուղւում է նրան սպա-
նել... Սա այդտեղից էլ փախչում է... Հիմա
արդէն երկու մարդ են վազում նրա ետևից՝ էշի
տեղը և երեխայ վրժած կնոջ տեղը:

Փախչողը հասնում է մի լայն առուի ափին,
նա մտածում է՝ լա՛կ և նոյն է, այսպէս թէ այնպէս
ինձ պէտք է սպանեն իմ հալածողները, աւելի
լաւ է թուշեմ առուի վրայից, թէկուզ ոտս կոտ-
րեմ, բայց գոնէ կենդանի կը մնամ: Եւ նա
թուշում է. բայց թաւրսի պէս, առուի այն կող-
մը թուրի ետևից նստած է լինում մի պառաւ
կին. փախչողը թուշելով առուի վրայից ուղիղ
ընկնում է պառաւի վրա ու իր մարմին ծանրու-
թեամբ տեղն ու տեղը սպանում է նրան: Խեղճ

կանայք են, որ փոքր ի շատէ բացերես են շըրջում իսկ աղաղ ու նշանած ուխտաւորները յետ չեն մնում իրանց ընկերակցութիւնը, սրանք էլ պակաս հազմոված չեն: Վանքում ասեղ գցելու տեղ չը կայ. անդադար խմբերով մարդիկ մանում են վանքը և խմբով էլ դուրս գալիս: Խուժանի ծիծաղը, ուրախ գոռում դուրսնելը, երգերը միախառնվում են զուգահեռներ զիլ ձայնի հետ: Այստեղ կայր աշուղը իր սաղմով և խաղով է ժողովել իր շուրջը մարդկանց մի խումբ, այնտեղ թառածով մէկը զբաղեցնում է ուրիշ մի խումբ: Այն բոլոր երաժշտական գործիքները, որ հնարել է Ասիան և ուստաց հարմար խառնվել են իրար: Փոքր ինչ հետու լարախաղաց երկու հայ զարաբաղի կանայք գրաւել են հետաքրքիր մարդկանց մի մեծ բազմութիւն: Սրանցից հասակաւորը աւելի վարժ լարախաղաց է. երկուսն էլ հերթով են պարում լարի վրա, անդադար երեսներին խաչ հանելով և սրբերի անունը տալով, աշխատում են վառել ամբողջ շերտնումը լարի և հաւատացնել նրան, որ չի վերստեղծ չորհրդով այդ հունարը: Մեղ հետաքրքրում են ջրղական երգերը և գեծուղը (հալլին), որոնց ժամերով լսում ենք, նայելով միաժամանակ ջրղերի և ջրղահինների այդ գեղեցիկ պարին: Երկուսն էլ, մութն ընկել է սաւերում, ուխտաւորների մէջ ամենուրեք վառվեցին հաղարար ճրագներ, այդ ժամանակ մենք կանգնած ենք մի բարձրաւանդակ տեղում. ինչ հիմաւրի տեսարան է ներկայանում մեր աչքերին. փոքր առ փոքր ամբարձում են և երկրի ճեղքները, փոքր փոքր աստղերը: Ամբարձ ճեղքեր, պարեր, ահա ինչ ենք տեսնում մենք, բարձրաձայն երգեր և խաղեր, ահա մեր լսածը, և այս բոլորը խառնվելով ձիւրի խորհրդով հետ, օդն է թնդացնում:

Բայց գիշերային մթութեան մէջ պծպծան ճրագները այնքան էլ լոյս չեն տալիս, որքան այրվող խաղողիները, որոնք բոցավառ սիւներով հրաշալի լոյս են սփռում շրջակայքում: Խաղողիները վրա, մանր ու խոշոր կաթնամանի մէջ եփվում է մատաղը: Այս գիշեր հաղարից աւելի ոչխարների մորթվեցան և դեռ քանի հազար կայ կենդանի: Վէս գիշեր է: Լուսինը—այս նազելի թաղահին, ահա երեքսու ամպերի տակից և իր փայլով նսեմացրեց ամեն ինչ: Ընթերցող, գուցէ ձանձրացած իմ անտեղի բանաստեղծութիւններից, այս պատճառով և վերջ տամ նկարագրութեանս մի քանի բան աւելացնելով: Ս. խաչի ուխտի

կնոջ կողքին նստած է լինում նրա երիտասարդ որդին, որը տեսնելով մօր մահը, ընկնում է սպանողի ետից, բայց չէ կարողանում հասնել նրան:

Եւ ահա էշի տէրը, երեխայ վիժած կնոջ մարդը և սպանված մօր որդին, դանդաղ են տալիս դատարան: Դատաւորը կանչում է մեղադրվածին և մեղադրողներին ներկայութեամբ վճռում է հետևեալը:

—Դու սպանեցիր պառաւն, նրա վրա ընկնելով...

—Այո, դատաւոր.

—Դու, ուրեմն, ինքը պէտք է հիմա առուի ափին նստես ու սպանված պառաւն որդին պէտք է քեզ վրա ընկնի ու քեզ սպանի:

Ապա դիմելով որդուն հարցնում է՝ «Գո՞հ ես իմ վճռով»:

—Գոհ եմ դատաւոր:

Այնուհետև դիմելով երեխայ վիժած կնոջ մարդուն հարցնում է.

—Այդ մարդը վախեցրեց կնոջը և նա ահից վիժեց երեխային:

—Այո, դատաւոր:

—Ուրեմն նա պէտք է այսուհետև քո տանը ապրի մինչև որ կինը կորած երեխայի տեղը մի ուրիշ երեխայ բերի: Գո՞հ ես իմ վճռով...

—Գոհ եմ, իմաստուն դատաւոր:

Վերջապէս դիմելով պոչը կորցրած էշի տիրոջ հարցնում է.

—Դու գանգատվում ես որ այս մարդը քո էշի պոչը պոկեց, այնպէս չէ...

Էշի տէրը տեսնելով նախնիքաց վճիռներից թէ որչափ իմաստուն է եղել դատաւորը, յուսահատված արդարանում է.

—Ոչ, ոչ, դատաւոր, ես ոչինչից չեմ գանգատվում, իմ էշի հետ պատահածի մասին քեզ պատմողները բոլորն էլ սուտ են ասել... Իմ էշն իր ծնած օրից արդէն անպոչ է եղել...

Այժմ թողնեմ այդ առակախօսութիւնները...

Ժամանակ նախկին տարիներում միշտ կռիւներ էին լինում հայերի մէջ, կամ հայերի և թուրքերի մէջ: Այս անմիտ կռիւների հետեանք այն էր լինում, որ մի քանի մարդ իրար սպանւում էին: Ներկայ տարին Գարապետեանի գաւառապետի և պրիստաւի շնորհով ոչինչ անկարգութիւն տեղի չունեցաւ. ատրճանակ կամ հրացան արձակելը բնաւ արգելված էր և օրինական գտնվող խիստ պատժվում էր: Ոչ սակաւ նպաստում էին կարգապահութեան գերական տանտէրները, ձիաւորները և կողակները: Այսպէս թէ այնպէս մենք կրկին համոզվեցանք, որ հայերը որչափ աշխատասէր են սովորական ժամանակ, տոններին, ուխտերին նոյնչափ քեֆասէր են, անգամ անդուստ և ծայրահեղ ուրախութեան միջոցին: Սակայն խոցճ հայ կանայք և աղջկանք զուրկ են մնում գրեթէ որ և է ուրախութիւնից և պարերից: Ուխտաւորներում անգամ: Կիրակի օրը մինչև երեկոյ ամենեքեան ցրվում են իրանց տները: Ուխտից յետոյ իմացայ, որ էլի ուխտ պիտի լինի առաջիկայ կիրակին, 21-ին, և որ այդ ժամանակ հաւաքվում են այն մարդիկ, որոնք որ և է պատճառով չէին եկել. սրանք լինում են մօտակայ գիւղացիները: Ուրեմն էլի օգուտ վանքին՝ էջ միածնին: Այս բոլորից յետոյ մենք այն եղրակացութեան ենք հասնում, որ 1) ա. խաչի պէս յայտնի ուխտաւորները առիթ են տալիս մի գաւառի հայ ժողովրդին ծանօթանալու հարեան կամ ուրիշ գաւառի հայ ազգաբնակչութեան հետ, ասել է, որ համերաշխութեան սերտ կապեր են հաստատվում հայ ժողովրդի մէջ, 2) զարկ են տալիս մեր երկրի առևտրին, բնական բերքերի փոխանակութեան:

Ա. Ե.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԲԱՅԱՋԷՏԻՑ

Նոյեմբերի 3-ին Տեղի հայտարար դատաւոր պ. Պաւլով արդարադատութեան միջնատրի հրամանով անցել սեպտեմբեր ամսի 24-ին տեղափոխվեց Ախալքալաք քաղաքը մի և նոյն պաշտօնով:

Սեպտեմբերի 23-ին, կիրակի օրը, քաղաքապետ պ. Ալիբեկեանց և մի քանի տեղացի պատուաւոր անձինք ի պատիւ այդ ընտրի հիւրի քաղաքապետի տան մէջ պատրաստել էին ճաշկերպ, որին հրաւիրված էր և քաղաքում ծառայող դատաւորը: Ազգու ճառախօսութիւններով ճաշկերպը

Ես ուզում եմ ընթերցողիս հետ փոքր ինչ մասնաւոր անել այն քանի վրա թէ որչափ կատարելագործվում է քաղաքակրթ մարդկութիւնը այլ և այլ աֆերիստութիւնների մէջ... Մինչև այն աստիճան, որ ամեն լուսամիտ մարդ կարող է պոչը կորցրած էշի տիրոջ պէս կատարելապէս յուսահատվել, հիասթափվել և նրա պէս նոյն իսկ ուրանալ մարդկային քաղաքակրթ հասարակութեան մէջ եղած որ և է բարոյական առաջադիմութիւն:

Ահա բանը ինչու՞ն է. մի մարդ հրատարակում է մի յիմար գիրք. նա գիտէ թէ կամուր կերպով ոչ ոք չի առնի այդ յիմար գիրքը... Ի՞նչ անի, որպէս զի գիրքը ծախվի:

Եւ ահա նա դիմում է հետեւեալ միջոցին: Պօստային նոր օրէնքով կայ մի նոր միջոց ծրարներ ուղարկելու, որն անուանվում է «նալոճի» պատճառ, այսինքն ուղարկողը միայն պօստային ծախս է վճարում, իսկ դուք ստանալով ծրարը, կամ պատճառ, ձեր քաղաքի պօստատանը համ ուղարկված ապրանքի գինն էք հատուցանում, համ էլ պօստային ծախսը նորից վճարում...

Ի հարկէ ձեր կամքիցն է կախված ծրարը չընդունի, բայց ինչպէս իմանաք թէ ի՞նչ կայ կտաւի մէջ... Ձեզ ասում են, դիցուք, մի գիրք է... Սակայն դուք ի՞նչ գիտէք արժէ արդեօք ստանալ այդ գիրքը, թէ պէտք է մերժել ծրարի ընդունելը: Դուք ինքներդ ոչինչ չէք պատուիրել, և ձեզ ուղարկում են այդ գիրքը առանց ձեր գիտութեան... Գուցէ շատ հետաքրքիր մի գիրք է...

Եւ ահա դուք ստանում էք, վճարում էք 2 ռուբլի 40 կոպէկ, ծրարը տուն էք բերում, միշտով կտրում էք կտաւը, ծրարը բաց էք անում և համոզվում էք թէ դա ուրիշ բան չէ, եթէ ոչ մի աֆերա:

Այդ տեսակ բան այս օրերս պատահեց և մի խմբագրութեան հետ: Ստանում ենք պօստային մի յայտարարութիւն, որից երևում է թէ Պետերբուրգի մի ծրար է ուղարկված մեզ, որը «նալոճի» պատճառով գնահատված է 2 ռուբլու 40

աւարտվելուց յետոյ, յիշեալ քաղաքապետ, իբրև ներկայացուցիչ քաղաքիս ամբողջ հասարակութեան, ի նշան երախտագիտութեան, որ պ. Պաւլով տան և մէկ տարվայ ընթացքում այստեղ արդարութեամբ հայտարար դատաւորի պաշտօն է կատարել, ընծայեց նրան մի արձանագրութիւն, որի վրա փորագրված էին առասպ լեզուով այդ բառերը. «Михаилу Павловичу Павлову, Достойному Судьи, отъ общества города Новобаязета». Քաղաքապետը, մատուցանելով ընծան, ասեց. «Ամբողջ Նոր-Բայաջէտին և նրա գաւառին զգալի է այսօր տեսնելով ձեզ նման ժողովրդասէր և ներդասէր գրութեան մէջ մշտնջող դատաւորի հեռանալը, վառն որոյ ամբողջ Նոր-Բայաջէտի հասարակութիւնը երախտաւորաց հանդիսանալով, իբրև արդարադատ դատաւորի, նուիրում է ձեզ ուղիղ սրտով այդ ընծան: Ընդունելով այդ նուէրը, պ. Պաւլով յայտնեց իր շնորհակալութիւնը իրան յայտնած համակրանքի համար: Միւս օր առաւօտեան մեծ բազմութիւն, նստած ձիաների վրա, ճանապարհ ձգեց այդ աղին: Հիւրին մինչև քաղաքից 15 վերստ հեռավորութեան վրա գտնվող Հալի-Մուսան պօստային կայարանը:

Գողովիւնը և չարագործութիւնը մինը միւսի ետեից սկսվել են շարունակ կրկնվել այստեղ: Անցեալ հոկտեմբերի վերջերում մի գիշեր առաջինը քանդելով Գովաթեանց եղբայրների խանութի պատը, կողպտեցին դանաղան ապրանքներ և կանխիկ դրամ 194 ռուբլ գումար: Ի՞նչ թէ քաղաքապետ պ. Ալիբեկեանցի աշխատակցութեամբ ոստիկանութիւնը կալանաւորեց յանցաւորին և յանձնեց հայտարար դատաւորին, բայց մի քանի օրից յետոյ յանցաւորի ընկերակիցները վրէժնիւղի լինելով, այրեցին քաղաքապետի մի տեղ դարձած երկու հարկու արաբ խտր: Լաւ կը լինէր, որ շուտ հեռացնէին քաղաքից այդ չարագործներին:

Մ. Վ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԻՆԵՐ

Մի քանի օր է արդէն, որ կովկասեան սարերի վրա ընկած ձիւնի պատճառով Ռուսաստանի պօստը չէ ստացվել մեղանում: Լարսի մօտ ճանապարհի վրա ընկել են և քարից կոյտեր: Ժանապարհը կտրված է:

Կօպէկի: Վճարում ենք փողը, բայց ենք անում ծրարը և ի՞նչ ենք տեսնում:

Մի ինչ որ Պ. Կ. Մարտիանով (П. К. Мартыановъ) մի ուսուիրն գիրք է՝ հրատարակել Պետերբուրգում «Прѣтъ нашей интеллигенции, Словарь-Альбомъ русскихъ дѣятелей XIX вѣка» վերնագրով:

Գիրքը բաղկացած է 1450 անձանց մասին զբրած փոքրիկ ոտանաւորներից, բայց այդ կարճ ոտանաւորներն այն աստիճան յիմար, անհամ, անմիտ և նոյն իսկ անդադէտ կերպով են յօրինված, որ ի հարկէ, ոչ ոք չէր առնի գիրքը, եթէ հեղինակը նրան զօռով չը ծախէր, և ահա նա օգտվում է պօստային նոր կանոնից, որի միջոցով կարելի է ապրանք ուղարկել առանց ոչինչ վճարելու, իսկ վճարը պահանջել ապրանք ստացողից:

Գիրքն արժէ երկու ռուբլի, իսկ գրքեր մէջ կան 1450 անձանց մասին անհամ փոքրիկ ոտանաւորներ, և ահա, եթէ հրատարակողը, ինչպէս և արել է գրքի մէջ մտած թիֆլիսցի գործիչների վերաբերմամբ, այդ գրքից մի մի հատը «նալոճի» պատճառով կուղարկէ իր գրչով անմահացրած բուր 1450 անձանց, — նա անմիջապէս կը ստանայ 2900 ռուբլի... Ուրեմն համ իր տալագրութեան ծախսը դուրս կը գալ, համ էլ մեծ շահ կունենայ...

Տեսնում էք, ընթերցող, որքան բարոյապէս առաջադիմում է քաղաքակրթ մարդկութիւնը, որքան ճարպիկ է դառնում մարդը ստոր միջոցներով իր նմանների զրպանից փողերի գլխիւնում...

Բայց թէ որքան հրաշալի են բանաստեղծութիւնները, այդ իսկոյն կը տեսնի ընթերցողը մի քանի նմուշներից.

Сѣтова (Агаларова)
Аркадіская звѣзда
И Кавказская княгиня
Та-жъ и нынѣ, какъ всегда
Лицедѣйка—героиня.

Гамбашидзе
Издаетъ журнальчикъ «Пастырь»

«Новости» լրագիրը հաղորդում է, որ մինչև րոթեանը մի ծրարի է առաջարկված, զորով միացնելու վճար գետը Ուրալ գետի հետ:

Մեղ գրում են Ա.ՂԱՍՅԱՆԻՑ հետեւեալը. «Այս օրերս Աղստաֆայով անցան երեք հոգի հանգիստ, որոնցից մէկը, պ. Բօժիկովսկի ընկալեալ էր Սիբիրից, որտեղ ինքն հանքեր շատ հարուստ մարդ է: Պարտները բերել են իրանց հետ բաւական թւով գործիքներ և զնն են Գիրիշանի կողմերը հետազոտելու: Երբ կարծիքով այդ կողմերում ոսկու հանքեր պէտք լինեն: Իրանց տակով խմբէթի կողմերում նրա գտել են նիկ և լի հանք»:

Շամախու գաւառից մեզ գրում են. «Մի այժմ անձրև չը կայ մեր կողմերում, ուստի վարուցանքը դեռ չէ սկսվել գաւառում»:

Շամախու գաւառի Սաղեան գիւղից մեզ գրում են հետեւեալը. «Կարճեալ սկսվեցան մեր գիւղը բարբարոս արարքներ. գիւղացիք միմեանց քեզ ու մարդներ են հրդեհում: Ի՞նչ պէտք է մեր գիւղացիների դրութիւնը, երբ կիրքը, թիւն մութիւնը, խռովութիւնները, երկպառակալութիւնները՝ այդքան խոր արմատներ են գցել հայ գաղտ վարք ու բարքերի մէջ»:

ՎԵՐԻՆ-Ա.ԳՈՐԴԻՍԻՑ մեզ հաղորդում են Լեւալ տեղեկութիւնները. «Թէ Աղուխում և նրա շրջականերում տարածված է այժմ տառապափոխիկ հիւանդութիւնը: Կոպերը կոտորում են մեծ քանակութեամբ և խոցճ գիւղացիք գիտնալով իրանց կենդանիներին բռնկելու ջոցներ, դիմում են դանաղան մատաղապետիւններին: Օրինակ, հիւանդ կուր տանում եկեղեցու չորս կողմն են պատեցնում և Սիբ կարծիքով պէտք է արգելվէր բազմ կովի մի վաճառելը, մինչև հիւանդութեան ջանալը: Տանուտերի ուշադրութիւնն ենք հրում և այն խաղախութեան վրա, որին գիտութեամբ մտալաճանքը՝ այժի միտը ծախելու մար. նրանք 3 թէ 4 ոչխարի հետ միասին թում են մի այժ և նոյն գնով վաճառում այժի միտը, խառն ոչխարի մի հետ»:

«Прав. Вѣстн.» լրագիր մէջ հրատարակվում

Для грузинскаго народа
Вытяжной имѣя пластырь
Въ немъ особеннаго рода.

Ипполитовъ-Ивановъ
Пишетъ оперы жезломъ
Капельмейстерскимъ въ Тифлисѣ
И хлопочетъ объ одномъ
Онъ у публики,—о бисъ.

Мачабели В. Г.
Грузинскій князь, въ Кахетіи родной
Разводитъ виноградъ, готовитъ вино,
А здѣсь защитникъ «афодокатъ балшой»
Передъ судомъ оправдываетъ вино.

Арцруни Г. Е.
Онъ въ Тифлисѣ для армянъ
Издаетъ газету «Мшакъ»
И сѣдитъ по ней духанъ
Что мы дѣлаемъ и какъ?

Іозефовичъ А.
Онъ газету основалъ
«Южный Край»
И отъ ней и въ ней кричалъ
«Ай, ай, ай».

Ուրեմն ընթերցող տեսնում է թէ որքան գիւղի ոտանաւորներ են. նրանք աւելի բաւ չեն թէ:

Дайте мнѣ арбуза
Для моего пужа.

Հիմա պ. պ. հայոց հրատարակիչներ, վիպագիրներ, բանաստեղծներ, թարգմանիչներ, միջոցը, հասաւ ձեզ համար էլ ոսկէ դարը...

Օրինակ առէք. պ. Մարտիանովից... իսկ մարդկութիւն էլ գրէք, կարող էք այժմ «նալոճ» պատճառով հաղաթնակ տարածել ձեր տալագրական յիմարութիւնը, և համապատասխան ծախսը դուրս կը գալ, համ էլ շահ կունենաք:

ԱՍԻԱՅԻ

